



Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ Հայաստան ծրագիրը ներկայացնում է գյուղատնտեսական տվյալների բարելավման ուղղությամբ իր աշխատանքները

Երևան, Հայաստան - ՀՄՀ-Հայաստանի կողմից ԳՏԳ արդյունքների ներկայացումը կայացավ 2009թ. սեպտեմբերի 16-ին, ժամը 15:00-ին, Արմենիա Մարիոթ հյուրանոցի Էրատո սրահում:

«Գյուղատնտեսական տվյալների գնահատումը» (ԳՏԳ) նպատակաուղղված է վերլուծելու գյուղատնտեսական հատվածի նախնական իրավիճակը ՀՄՀ-Հայաստան ծրագրի մեկնարկից առաջ՝ ուսումնասիրելով 2007 թ. իրականացված «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության» (ՏՏԿԱՀ) գյուղատնտեսությանը նվիրված բաժինը և ստացված արդյունքները համադրելով 2004 թ. ՏՏԿԱՀ-ի համապատասխան արդյունքների, ինչպես նաև վիճակագրական այլ աղբյուրներից ստացված համապատասխան տեղեկատվության հետ: Հուսալի և համեմատելի տվյալների առկայությունը թույլ կտա ՀՄՀ-Հայաստանին, ինչպես նաև գյուղատնտեսական հատվածի այլ շահառու խմբերին առավել լավ գնահատել այս ոլորտում իրականացվող ներդրումների և ծրագրերի ազդեցությունը:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Սամվել Ավետիսյանը, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՄԿ Մոնիտորինգի և գնահատման գծով տնօրենի տեղակալ Ռեբեկա Թանսթալը ներկայացրեց Գյուղատնտեսական տվյալների գնահատման արդյունքները ՀՄԿ տեսանկյունից, իսկ իրականացնող կազմակերպություն՝ «ԱՎԱԳ Սոլյուշնս»-ի ներկայացուցիչներ Մելիք Գասպարյանը և Նաիրուհի Ջրբաշյան ներկայացրեցին ԳՏԳ բուն արդյունքները:

Մոնիտորինգը և գնահատումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի մաս կազմող հիմնական բաղադրիչներից է, որի միջոցով գնահատվում է ծրագրի կատարողականը, ծրագրային առանձին բաղադրիչների ազդեցությունը և ծրագրի ընդհանուր ազդեցությունը գյուղական աղքատության վրա:

Այս միջոցառման և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կոորդինացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: